

Վ. Ա. ՔՈՍՅԱՆ. Ժամանակակից հայերենի բառակապակցությունները (Երեւան, 1975). Գրաբարի բառակապակցությունները (1980). Միջին հայերենի բառակապակցությունները (1984). Արևմտահայերենի բառակապակցությունները (1986):

Բառակապակցությունը, լինելով շարահյուսական իրողություն, սերտորեն առնչվում է ինչպես ձևաբանության, այնպես էլ շարահյուսական դանդաղան և բնույթների հետ: Բավական սերտ են նաև բառակապակցության և ոճարանական տարրեր և բնույթների առնչությունները: Այսպես՝ անհնար է բառակապակցությունների դասակարգումը և ևնթախմբավորումն առանց նկատի ունենալու ելակետային նշանակություն ունեցող այնպիսի խնդիրներ, թե ինչ խոսքի մասով են արտահայտված դրանց դերադաս անդամը և լրացումները: Նասկածից դուրս է, որ բառակապակցությունների յուրահատկությունները և ներքին բազմազանությունը մեծապես պայմանավորված են նրանով, թե դրանք ինչպիսի խոսքային դրսևորումներում (լեզվական ոճեր) են հանդես գալիս: Իրենց անխուսափելի ընդհանրություններով հանդերձ կարևոր տարբերություն ունեն, ասենք, գեղարվեստական և գիտական լեզվի բառակապակցությունները: Լիքնելով այսպիսի հանդուցականային լեզվական իրողություն՝ բառակապակցությունները, բնականաբար, մեր բազմազարյան քերականագիտության ուսումնական մեջ անուշադրության մատնված չէին կարող լինել: Բայց և իրողությունն այն է, որ մինչև վերջերս էլ դրանք ուշադրության առարկա են եղել որպես հարակից խնդիր, և խիստ զգացվել է դրանց, որպես ինքնուրույն և բնույթի, ամբողջական, բազմակողմանի ուսումնասիրության անհրաժեշտությունը: Ավելի քան 10 տարվա ընթացքում իրար հետևից լույս տեսան պրոֆ. Վ. Քոսյանի «Ժամանակակից հայերենի բառակապակցությունները» (1975), «Գրաբարի բառակապակցությունները» (1980), «Միջին հայերենի բառակապակցությունները» (1984), «Արևմտահայերենի բառակապակցությունները» (1986):

Գրական հայերենի տարրեր փուլերի բառակապակցությունների ուսումնասիրությունը կառավարված է մեկ միասնական նպատակադրումով

և սկզբունքով՝ լեզվաբանության զարգացման ժամանակակից նվաճումների մակարդակին համապատասխան:

Բնականաբար, ուսումնասիրողի հիմնական խնդիրներից մեկը լինելու էր բառակապակցության սահմանումը: Ընդգծելով, որ բառակապակցության ըմբռնման հարցում սովորական լեզվաբանության մեջ կա երկու կարծիք՝ Վ. Քոսյանն ընդունում և զարգացնում է Վ. Վիտորազովի ըմբռնումը: Ըստ ակադեմիկոս Վիտորազովի և նրա հետևորդների կարծիքի՝ բառակապակցությունն արտահայտում է թամբողջական, թեև անդամադատ հասկացություն: Այսպիսի ըմբռնումով բառակապակցությունը դիտվում է որպես անվանողական արժեք ունեցող լեզվական միջոց, որպես առարկաների և բնույթների անդամադատ անվանում: Այլ ձևով ասած՝ տվյալ դեպքում բառակապակցության և բառի տարբերությունն այն է համարվում, որ բառակապակցությունն անդամադատ հասկացություն է արտահայտում: Այս կարծիքն իշխող է առհասարակ սովորական լեզվաբանության, նաև հայ լեզվաբանության մեջ: Հայտնի է, որ, հակառակ վերը նշած ըմբռնման, Ա. Գվոզդեն ու նրան հետևող շատ լեզվաբաններ այլ կարծիք ունեն բառակապակցության էության մասին՝ այն համոզմանը լինելով, որ դա շունի անվանողական արժեք, արտահայտում է ոչ թե հասկացություն, այլ հասկացությունների հարաբերություն: Այսպիսի ըմբռնման օգտին խոսող հիմնական հանգամանքն այն է, որ համոզիչ չէ բառակապակցության անվանողական դեր վերադրելը: Իսկապես, մի՞թե, օրինակ, տուն գնալ, մանկիսկ ընկերոջը, գիրք կարդալ և նման բառակապակցությունները հասկացության անվանում են: Հասկացություն են անվանում «դիրք», բառը, «կարգալ» բառը, իսկ «գիրք կարդալ»-ը ոչ թե հասկացություն է արտահայտում (թեկուզ և այսպես կոչված անդամադատ հասկացություն), այլ՝ «դիրք» և «կարգալ»

հասկացությունների հարաբերություն, Զմոռանանք նաև, որ բազմամղամ բառակապակցությունները կարող են կազմված լինել հինգ, վեց և ավելի բառերից (օրինակ՝ «մեր շահել սրտից սիրով բխած ջերմ զգացումները»), որոնց առկա լանդապական արժեք վերագրելն ավելի քան անհիմն է թվում: Երկրորդական նշանակություն չունի նաև այն համադրմանը, որ բառակապակցությունները որպես հասկացությունների հարաբերություն արտահայտող իրողությունների դիտելու դեպքում հնարավորություն կունենանք իբրև աղբյուրի համարելու նաև համադաս անդամները (օրինակ՝ ալ ազնիվ տղամարդ, «տեսել էնք աղջակն ալ ազնիվ»): Այդ կապակցությամբ գոյություն ունի նաև հետադարձական անհրաժեշտություն՝ է ենթադրում բացահայտի և բացահայտյալի կապակցության հարցը: Իսկ ինչ վերաբերում է հեղինակի այն դիրքորոշմանը, որ բառակապակցությանը «համարել չեն ստորոգումը, նախադասության հնչյունները, հաղորդման բնույթի հետ կապված հատկանիշները» (տե՛ս «Ժամանակակից հայերենի բառակապակցությունները», էջ 29), ապա դա միանգամայն ճիշտ է և կայուն կովան է հանդիսացել բառակապակցության և նախադասության հստակ սահմանադրաման համար:

Բառակապակցության բազմազան տեսական խնդիրների արժեքը մեծապես ավելանում է հայերենի բառակապակցությունները աշխատության մի մասում, վերջինիս մեացած մասը և հաջորդ գրքերը Վ. Փոսյանը նվիրել է փաստական նյութի ուսումնասիրությանը: Իսկ այդ փաստական նյութ կոչվածը շատ հարուստ է: Զգացվում է, թե հեղինակն ինչպիսի անձանձիր աշխատանքով համապատասխան նյութ է քաղել դրաբարով, միշին հայերենով, ժամանակակից գրական լեզվի երկու ճյուղավորումներով ստեղծված հարուստ և բազմաբնույթ գրականությունից: Դասակարգումը զանգվածային անկենդան նյութին շունչ ու օգի է տալու: Բառակապակցությունների դասակարգման հարցում պակաս չեն առարկաբանությունները, անլուծելի թվացող հակասությունները: Ինչպես ասել գեղարվեստ, այս հարցում էլ Վ. Փոսյանը, թառաքելով հակասությունները, հակված չէ դատարան ունեցող իրաբաններ կարծիքները մեկտեղել: Հարցադրությունները նաև փաստական հարցադրություններ են: Երբեք չեն լուծվում, որոնցով առաջնորդվելու շնորհիվ երևալի ուսումնասիրությունն առավել խոր և համակողմանի է դարձնում: Հիմնականում մեղադրվում են բառակապակցությունները խմբավորման ավանդական ըմբռնումների և տերմինավորման ուղորդում: Վ. Փոսյանը ասել է,

ուշադրությունը սեփական է փաստերի հերթմաններին բացահայտմանը. դրանց համակողմանի ուսումնասիրմանը, ինչպես ժամանակակից գրական հայերենի՝ իր արևելահայ և արևմտահայ ճյուղավորումներով, այնպես էլ գրաբարի ու միջին հայերենի բառակապակցությունների դասակարգումը տրվում է միանգամայն ընդունելի սկզբունքով: Այդ հարցում որպես հիմնական ելակետ է ընդունված լրացալի խորհրդանշանի պատկանելությունը: Եվ քանի որ հայերենում իբրև լրացալ հանդես են գալիս գոյականը, բայը, ածականը, մակբայը, մասամբ և թվականն ու դերանունը, ըստ այդմ էլ հեղինակը տարբերակում է գոյականական, բայական, ածականական, մակբայական, թվականական ու դերանունական բառակապակցությունները: Միանգամայն իրավացիորեն նշելով, որ այդ դասակարգումը թերի կլինի, եթե հաշվի չառնվի նաև լրացումների խոսքիմասային հատկանիշը, Վ. Փոսյանը՝ բառակապակցությունները խմբավորելիս նկատի է ունենում նաև լրացման արտահայտությունը՝ բազմազան առումներով: Եթե բառակապակցության առանցքային բառի լրացումը գոյական է, ապա նկատի են առնվում դրա հոլովական բազմազան իմաստներն ու նրբերանգները, այլ խոսքի մասով արտահայտված լինելու դեպքում ուշադրության կենտրոնում են պահվում տարբեր խոսքի մասերի կապակցելիության հնարավորությունները և այլն: Որոշ ուսումնասիրողներ պակաս կարեւորություն չեն տալիս բառակապակցությունների այնպիսի դասակարգմանը, որի դեպքում հաշվի է առնվում բառի համապատասխան գործառական նշանակությամբ օժտված լինելը: Այլ ձևով ասած՝ նկատի է առնվում, թե դա հաղաքակցման գործառույթով է օժտված, թե՛ ներգրծման գործառույթով: Հանդես է գալիս զանազան դատողությունների արտահայտման միջոց, թե՛ հատկանշվում է ընդգծվում: Հուզարտահայտչական երանգով: Վ. Փոսյանն այսպիսի դասակարգում չի անտեսում: Երբ նաև նշանակություն առնող, բայց պատշաճ չափով կարևորություն է տալիս գեղարվեստական, արտահայտչական նշանակություն ունեցող բառակապակցությունների առարկաները՝ համապատասխան տեսակների ընդհանուր շարադրանքի մեջ: Այսպես՝ գրական լեզուում առնցող գոյականի բառակապակցությունների քննության ժամանակ առանձնաշնչվում է երկու տեսակի ուղղական հոլովով լրացում՝ առաջինը՝ առաջինը և մակբայի որոշիչ օժտվածությունն առաջինը:

չին Հերթին անձնանունները, տեղանունները հասարակ դրականի մոտ. Օրինակներ՝ Պրամաթ Խրեալին խոսքեն սա ևր հասկցուի, Մենք Արարած ղերևումանեառուն մր ունինք Յրեղևոյի մոտա և այլն Անդրադատնայով ուղղական հոյով վրա արտահայտված լրացման երևորող տեսակին՝ հեղինակը նշում է. «...մակդիր որոշիչն օժոված է արտահայտականությամբ... Օրինակներ՝ Ռոյլ մր նալալաթ, փռեղ մր ժպիլա՝ Քուրալ մր խոսք գիթեց իմ սիրտ, Լոկ հուրա, Ժպիլա, արցունք տեսի նախ և այլն Կամ մեկ այլ դեպքում նշվում է. «Գեղարվեստական խոսքում ավելի շատ է ենթակայական սեռականի փոխարենական կիրառությունը Այսպես, կազմվում են՝ հողմերի շուրջը, ծովերի մոտերը, արեւի համբույրը, հովի գրույցը, մուրճի լուծությունը...» (Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, էջ 63)։

Իսկ դրական հայերենի երեք փուլերի (գրաբար, միջին հայերեն, նոր հայերեն) բառակապակցություններն ուսումնասիրված են հիմնականում միևնույն նպատակադրումով, հետազոտական նույն եղանակներով, այնուամենայնիվ էպական հաղթահարված են անխուսափելի թվացող կրկնությունները։ Դա բացատրվում է նրանով, որ այդ տարրեր փուլերի համապատասխան նյութը ուսումնասիրված է ինքնին, իր յուրահատկությունների պարտադրած պահանջների հաշվառումով։ Ահա թե ինչու միևնույն երևույթի ուսումնասիրությունը տարրեր գրանորումներում հանդեսնում է մեր լեզվի տարրեր փուլերի ոչ միայն բառակապակցական բնդհանրությունները,

այլև որոշակի տարրերությունների առաջահայտմանը։ Հատկապես վերջին հանդամանքի առնչությամբ անհրաժեշտ է ընդգծել ուսումնասիրության կարևոր արժանիքներից մեկը՝ այլմանավորող աշխարհի մի երևույթ, ինչպիսին է մեր լեզվի բառակապակցական հոմանշության հարստությունների ցուցադրումը։ Ուսումնասիրությունն իրավացիորեն հեղինակին հանգեցրել է այն եղրակացությանը, որ բառակապակցությունները բավական շատ հնարավորություններ ունեն շարահյուսական հոմանիշների գրանորման համար։ Այն համոզմանը լինելով, որ շարահյուսական հոմանշությունը կարող է լինել կամ նույնանշություն, կամ հոմանշություն՝ հեղինակը նշում է, որ վերջինս ավելի շատ է տարածված, քան առաջինը (օրինակ՝ մեկին հանելի և մեկի համար հանելի, ընկերների հետ զնալ և ընկերներով զնալ և այլն) (տե՛ս Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, էջ 36)։ Այս տիպի որոշ փաստերի արժեքավորման հարցում թերևս հնարավոր չլինի համաձայնել հեղինակի հետ։ Մեզ թվում է, օրինակ, խոսել գործից և խոսել գործի մասին կապակցությունները ոչ թե շարահյուսական նույնանիշներ են, այլ՝ հոմանիշներ, քանի որ ունեն ոճական, կիրառական էական տարրերություններու կասկածից դուրս է, որ հայերենի շարահյուսական հոմանշությունն ուսումնասիրող ոճաբանը իրեն օգտակար շատ նյութ կարող է գտնել։ Քոսյանի սույն աշխատություններում։

Հ. Մ. ԱՄԱՆՅԱՆ
Ս. Ա. ՄԵԼԵՈՆՅԱՆ

YOVHANNES TLKURANCI AND THE MEDIAEVAL ARMENIAN
LYRIC TRADITION, by James R. Russell, University of Pennsylvania
Armenian Texts and Studies, 7, Scholars Press, Atlanta, Georgia, 1987.

Պենսիլվանիայի համալսարանի «Հայկական բնագրեր և ուսումնասիրություններ» մատենաշարով լույս տեսած վեց հայագիտական աշխատություններից այժմ հաջորդեց յոթերորդը՝ «Հովհաննես Թլկուրանցին և հայ միջնադարյան քնարերգական ավանդույթը», աշխատասիրությամբ Զեյնա Ռ. Ռասելի։

Ներածության մեջ Զ. Ռ. Ռասելը ընդգծում է, որ միջնադարյան Հայաստանի քնարերգության ամենագույնիվ Հովհաննես Թլկուրանցին քիչ է հայտնի Արևմուտքում։ Այս գրքում ներկայացված է Թլկուրանցու բանաստեղծությունների

(տաղերի) անգլերեն թարգմանությունը, սա բանաստեղծի տաղերի առանձին հրատարակությունն է օտար լեզվով։

Ուսումնասիրողը նշում է, որ պետք է ամփոփի ձեռք ցույց տալ հայ քնարերգության արմատները, որոնք սերտորեն առնչվում են նախամահմեդական իրանի մշակույթին։ Դեռ հայոց Արշակունյաց թագավորության օրերից հայերն ազդվել են հարևան զրադաշտական Պարսկաստանի մշակույթից։ Հայ դասական պատմիչները՝ Ագաթանգեղոս, Մովսես Խորենացի և ուրիշներ, վկայում են, թե հայոց Արշակունի